

The tourism evaluation system of historical landmarks, located in Shirak region, have been discussed in the article. The classification of monuments has been carried out. Several parameters have been evaluated by special coefficients to get more reliable datas.

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Սարգսյան Տ.Ա.

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն
tigran.sargsyan@ysu.am

Զբոսաշրջության կայուն զարգացման (ԶԿԶ) վերաբերյալ ամփոփ և ամբողջական գաղափար կազմելու համար անհրաժեշտ է տարանջատված կերպով ներկայացնել դրա էությունը, հիմնական նպատակն ու վերջնարդյունքը:

Ըստ այդմ, ԶԿԶ-ն պետք է դիտարկել որպես զբոսաշրջության կազմակերպման և զարգացման հայեցակարգային-գաղափարական հենք ու մեթոդաբանություն, ինչպես նաև գործնական մոտեցումների և լուծումների համակարգ: Դրա նպատակն է ներդաշնակ համապատասխանության ապահովումը՝ մի կողմից զբոսաշրջության ու դրա զարգացման, մյուս կողմից՝ կայուն մարդկային զարգացման հայեցակարգի հիմնադրությունների (տնտեսական արդյունավետություն, սոցիալական արդարություն, էկոլոգիական անաղարտություն և անվտանգություն) միջև: Հետևաբար, ԶԿԶ վերջնարդյունքը կամ պրոդուկտը կայուն զբոսաշրջությունն է՝ որպես զբոսաշրջության զարգացման օպտիմալ մոդել կամ տեսլական:

Դ.Ուիլերի բնորոշման համաձայն, կայուն զբոսաշրջությունը կայուն զարգացման գաղափարների ներդրումն է զբոսաշրջության ոլորտում: Սա նշանակում է այնպիսի զբոսաշրջություն, որը կասկածի տակ չի դնի ներկա և գալիս սերունդների հնարավորությունները՝ սեփական կարիքները բավարարելու, լայնորեն կօգտագործի և կպահպանի ռեսուրսները՝ ապահովելով դրանց երկարաժամկետ օգտագործումը (Weaver, 2006):

Ըստ այդմ, կարելի է առանձնացնել կայուն զբոսաշրջության՝ կայուն զարգացման դրույթներին համահունչ զարգացող զբոսաշրջության հետևյալ չափանիշները.

- Լինել էկոլոգիապես անվտանգ և անվնաս, իրականացնել բնապահպանական գործառույթներ:
- Համապատասխանել սոցիալական հավասարության սկզբունքին, ներգրավված լինելու հավասար պայմաններ ու հնարավորություններ ստեղծել յուրաքանչյուրի համար:
- Լինել տնտեսապես շահավետ, խթանել այցելության վայրերի՝ դեստինացիաների սոցիալ-տնտեսական զարգացմանը:
- Պահպանել և հարգել մշակութային բազմազանությունը, նպաստել միջմշակութային երկխոսությանը:

Ակնհայտ է, որ ՋԿԶ ապահովումը, կայուն զբոսաշրջության դրույթների գործնական իրականացումն ու կյանքի կոչումը բարդ և համալիր գործընթաց է, որը ենթադրում է տարածական համալիր մոտեցման կիրառում: Արդի պայմաններում այդպիսին պետք է համարել դեստինացիոն մոտեցումը՝ զբոսաշրջության կազմակերպման և զարգացման տարածական գործընթացի տարածական հենքը զբոսաշրջային դեստինացիան դիտելը: Ըստ էության, դեստինացիոն մոտեցումը հանդիսանում է զբոսաշրջության կազմակերպման և զարգացման գործում համակարգային մոտեցման լավագույն օրինակներից:

Ի մի բերելով զբոսաշրջային դեստինացիայի բնորոշման տարբեր մոտեցումները՝ այն կարելի է ներկայացնել որպես փոխկապակցված, ամբողջական զբոսաշրջային համակարգ՝ կազմված հետևյալ բաղադրիչներից.

- տարածք և զբոսաշրջային ռեսուրսներ (ինչպես դրանց առկայությունն ու բազմազանությունը, այնպես էլ տեղաբաշխումն ու տարածական մատչելիությունը),
- այցելուներ և զբոսաշրջիկներ,
- տեղական բնակչություն և համայնքներ,
- ենթակառուցվածքներ (դրանց միասնականությունն ու ընդհանրությունը՝ դեստինացիայի տարածքի համար):

Ըստ այդմ, ՀՀ Վայոց ձորի մարզը որպես միասնական-ամբողջական զբոսաշրջային դեստինացիա դիտարկելը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով. Վայոց ձորի մարզում՝ որպես զբոսաշրջային դեստինացիայում ՋԿԶ հնարավորությունները, հիմնախնդիրներն ու հեռանկարները նպատակահարմար է ներկայացնել SWOT վերլուծության մեթոդի կիրառմամբ:

Աղյուսակ 1. Վայոց ձորի մարզը որպես միասնական զբոսաշրջային դեստինացիա

<i>Դեստինացիայի բաղադրիչները</i>	<i>Հիմնավորումը՝ ՋԿԶ ապահովման առումով</i>
Տարածք և զբոսաշրջային ռեսուրսներ	<ul style="list-style-type: none"> • Կոմպակտ տարածք՝ շուրջ 2300 քկմ մակերեսով, որն առանձնանում է բնական-աշխարհագրական սահմաններով և ամբողջությամբ զբաղեցնում է Արփա գետի վերին հոսանքի ավազանը • Հարուստ և բազմազան զբոսաշրջային ռեսուրսներ (ինչպես բնական, այնպես էլ պատմամշակութային)՝ գրեթե համաչափ բաշխված ու ներկայացված մարզի ողջ տարածքում, • Համաշխարհային հռչակ ունեցող բուժական-ռեկրեացիոն ռեսուրսներ՝ ի դեմս Ջերմուկի հանքային աղբյուրների
Այցելուներ և	Աշխարհագրական դիրքի առանձնահատկությունների շնորհիվ Վայոց ձորը կարող է թիրախային դեստինացիա համարվել հիմնական, այնպես էլ՝ տարանցիկ այցելուների և զբոսաշրջիկների համար

զբոսաշրջիկներ ⁶	
Տեղական բնակչություն և համայնքներ	Վայոց ձորը բնակչության թվով ՀՀ ամենափոքր մարզն է՝ շուրջ 50.000 բնակիչ և 29 համայնք (www.armstat.am): Այս հանգամանքն, այդուհանդերձ, զբոսաշրջության ոլորտում բնակչության առավել բարձր ներգրավվածության հնարավորություն է ստեղծում՝ դրանից բխող դրական սոցիալ-տնտեսական ազդեցությամբ: Զուգահեռաբար, համեմատաբար ցածր է բնական միջավայրի վրա մարդածին ծանրաբեռնվածության արժեքը, առկա է բնակավայրերի կոմպակտ տեղաբաշխում՝ հիմնականում ըստ Արփայի և դրա վտակների գետահովիտների: Հարկ է նշել, որ, որոշ բացառություններով, մարզում գրեթե ներկայացված չեն արդյունաբերության՝ բնական միջավայրի վրա առավել աննպաստ ներգործությունն ունեցող ճյուղերը:
Ենթակառուցվածքներ	Ճառագայթաձև ավտոճանապարհային ցանց՝ ըստ հիմնական գետահովիտների:

Ըստ այդմ, ԶԿԶ տեսանկյունից առանձնացվում են մարզի ուժեղ և թույլ կողմերը, բարենպաստ հնարավորություններն ու սպառնալիքները կամ մարտահրավերները: Վերլուծության հիմքում ընկած են կայուն զբոսաշրջության՝ վերը նշված էկոլոգիական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ցուցանիշները:

Աղյուսակ 2. Վայոց ձորի մարզում ԶԿԶ SWOT վերլուծություն

<i>S-ուժեղ կողմեր</i>	<i>W-թույլ կողմեր</i>
<ul style="list-style-type: none"> • Հարուստ զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսներ, էթնոմշակութային գործոնների բազմազանություն, • Հիմնականում՝ կոմպակտ տարածք և տարաբնակեցում, • Տարանցիկ աշխարհագրական դիրք՝ Երևանի և Սյունիքի ու Արցախի միջև, Երևանի և Իրանի, Սևանի ավազանի և Հարավային Հայաստանի միջև, • Բնակչության մոտիվացվածություն և ներգրավվածություն. մասնավորապես, ագրոզբոսաշրջության ոլորտում, • Շրջակա միջավայրի վրա ունեցած ներգործության առումով՝ առավել աննպաստ արտադրական ձեռնարկությունների բացակայություն: 	<ul style="list-style-type: none"> • Տեղավորման ոլորտի զարգացման ոչ բավարար մակարդակ. 19 հյուրանոցային օբյեկտ՝ ՀՀ ընդհանուր ցուցանիշի 3.5%-ը (www.armstat.am), • Անկանոն տրանսպորտային հաղորդակցություն՝ ինչպես Երևանի հետ, այնպես էլ մարզի համայնքների միջև • Զբոսաշրջային ներուժի ոչ լիարժեք, չհամակարգված օգտագործում • Բարդ ռելիեֆային պայմաններ, ինչը, հաճախ, դժվարեցնում է ավտոմոբիլային հաղորդակցությունը • Երկաթուղիների բացակայություն:

⁶ Առանցքային տարբերությունը կայանում է նրանում, որ զբոսաշրջիկները պետք է անցկացնեն առնվազն 1 գիշերակաց՝ մշտական բնակության վայրից դուրս, իսկ այցելուների պարագայում ուղևորության տևողությունը կարող է 24ժ-ից պակաս լինել՝ առանց գիշերակացի

<i>Օ-հնարավորություններ</i>	<i>T-սպառնալիքներ</i>
<ul style="list-style-type: none"> • Տարանցիկ զբոսաշրջային հանգույց՝ ՀՀ երկար զբոսաշրջային առանցքի վրա (Երևան-Արարատ-Վայոց ձոր-Սյունիք), • Գաստրոնոմիական, գինու, մշակութային զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ. այս առումով կարևորագույն նշանակություն ունի գինու ամենամյա փառատոնը Արենիում և հարևան համայնքներում, • Ջերմուկի օդանավակայանի վերագործարկումը՝ միջազգային թռիչքների իրականացմամբ, ինչը թույլ կտա լիարժեք օգտագործել Ջերմուկի ռեկրեացիոն ներուժը՝ վերածելով քաղաքը միջազգային չափանիշներին համահունչ առողջարանային կենտրոնի, • Գետավազանների սկզբունքով՝ ենթադեպարտիստիկաների ձևավորում ու զարգացում (Եղեգիսի, Դարբի), միջդեպարտիստիկաների արդյունավետ կապերի ապահովում • Համայնքահենք զբոսաշրջության (community-based tourism) զարգացում, ինչը համայնքների կայուն սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր խթան կհանդիսանա 	<ul style="list-style-type: none"> • Նախիջևանի ինքնավար հանրապետության հետ ունեցած սահմանն ու ադրբեջանական ագրեսիայի հնարավոր ռիսկերը, • Բնապահպանական որոշ ռիսկեր՝ փոքր ՀԷԿ-երի թվի չհիմնավորված ավելացում և, որպես հետևանք, բնական լանդշաֆտների էսթետիկական արժեքի կորուստ (մասնավորապես, Եղեգիս գետի հովտում), հանքարդյունաբերության բացասական բնապահպանական ներգործությունը (Ամուլսար) և այլն:

ԶԿԶ ծրագրման և իրականացման համատեքստում գործնական մեծ նշանակություն կարող են ունենալ նաև վերլուծության տարրերի հետևյալ զուգակցությունները.

- SO. մարզի ուժեղ կողմերն ինչպե՞ս են օգտագործվում զբոսաշրջության զարգացման առկա հնարավորությունները կյանքի կոչելու առումով:

- ST. ուժեղ կողմերն ինչպե՞ս կարող են օգտագործվել՝ մարզում ԶԿԶ սպառնալիքներն ու մարտահրավերների բացասական ազդեցությունը չեզոքացնելու նպատակով,

- WO. ինչպե՞ս կարող են հաղթահարվել մարզում ԶԿԶ թույլ կողմերը՝ առկա հնարավորություններն օգտագործելու միջոցով,

- WT. թույլ կողմերի և սպառնալիքների փոխազդեցության համալիր վերլուծություն՝ հնարավոր կորուստների առավելագույն նվազեցման նպատակով:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ Վայոց ձորի մարզում առկա են միասնական զբոսաշրջային դեստինացիայի վերածվելու նախադրյալներ, ինչն էլ, իր հերթին, կարող է դիտարկվել որպես մարզում ԶԿԶ ծրագրման և գործնական իրականացման առանցքային նախապայման: Այդուհանդերձ, կայուն զբոսաշրջության զարգացման առկա ներուժին զուգահեռ, Վայոց ձորում հրատապ կարևորություն է ստանում այդ ներուժի ռացիոնալ օգտագործման ուղիների ու պայմանների ապահովումը:

Մասնավորապես, ենթակառուցվածքների, սպասարկման օբյեկտների ցանցի զարգացումը, զբոսաշրջային եթուղիների բովանդակային հարստացումն ու արդիականացումը, ինչն արդիական ու հրատապ է ոչ միայն Վայոց ձորում:

Միաժամանակ, ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման ապակենտրոնացման համատեքստում, ԶԿԶ առումով դրական մեծ ազդեցություն կարող է ունենալ Վայոց ձորի մարզում զբոսաշրջության զարգացման տեղական մարմինների ու կազմակերպությունների կարողությունների ավելացումն ու արդյունավետ աշխատանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Weaver David Sustainable Tourism: Theory and Practice, 2006, 240 p.
2. www.armstat.am - Հայաստանի Հանրապետության ԱՎԾ պաշտոնական կայք

SUSTAINABLE TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES, PROBLEMS AND PERSPECTIVES (ON THE EXAMPLE OV VAYOTS DZOR MARZ OF RA)

Sargsyan T.A.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, tigran.sargsyan@ysu.am

ANNOTATION

The main ideas of sustainable tourism development are analyzed in the article. As the main spatial tool of sustainable tourism development implementation, the idea of tourism destination is suggested and substantiated for Vayots dzor marz of RA. A comprehensive SWOT analysis of sustainable tourism development in Vayots dzor tourist destination is accomplished in the article.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԺՇԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վալեսյան Ա. Պ.

Շիրակի պետական համալսարան, Գյումրի, Հայաստանի Հանրապետություն an.valesyan@mail.ru

Զբոսաշրջության զարգացման վրա ազդող գործոններից բնական գործոնները կարող են ուղղակիորեն խթանել զբոսաշրջության զարգացմանը: Այդ գործոնները կարելի է գնահատել տարբեր տեսանկյուններից՝ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, բժշկաաշխարհագրական, ռեկրեացիոն և այլն: Բժշկաաշխարհագրական տեսանկյունից միջավայրը դիտվում է մարդու առողջության, ինքնազգացողության վրա ազդող մի հզոր համակարգ, որի յուրաքանչյուր բաղադրիչն ազդում է ոչ միայն առանձին, այլև փոխկապակցված մյուսների հետ: Այն թույլ է տալիս կատարել ընտրություն միջավայրի առողջարար